ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2021 թվականի N 675 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 4-րդ մասը, 4-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի դեկտեմբերի 18-ի N 209 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 540-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 219-Ն որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան ծխախոտային արտադրանք հանդիսացող հետևյալ ծխախոտային արտադրատեսակների վրա՝

սիգարներ, սիգարիլլաներ (սիգարիտաների), սիգարետ, կրետեկ, բիդի	2402 10 000 0 2402 20 100 0 2402 20 900 0
բարակ կտրատած ծխելու ծխախոտ, նարգիլեի ծխախոտ, ծխագլանակ	2403 11 000 0 2403 19 100 0 2403 19 900 0
տաքացվող ծխախոտով արտադրատեսակ (տաքացվող ծխախոտային գլանակ, տաքացվող կապսուլա ծխախոտով)	2403 99 900 9

».

2) հավելվածի 5-րդ կետում «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքով» բառերով.

3) հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ ենթակետով՝

«11) տաքացվող ծխախոտ՝ ծխախոտային արտադրանք, որը պարունակում է ծխախոտային հումք և նախատեսված է միայն տաքացման սարքով օգտագործման համար՝ առանց այրման կամ կիսաայրման։».

4) հավելվածի 10.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.2-րդ կետ՝

«10.2. Տաքացվող ծխախոտի օգտագործման ընթացքում պետք է բացառված լինի ծխախոտի այրումը կամ կիսաայրումը, ինչը որոշվում է ծխախոտային գոլորշու գազային ֆազայում 100 սմ^3 0.3 մգ-ից ոչ ավելի ածխածնի մոնոօքսիդի

պարունակությամբ:».

5) հավելվածի N 2 աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«

Տաքացվող ծխախոտ	խոնավություն (%)	7-ից ոչ պակաս
	գլիցերին թորած (%)	95-ից ոչ պակաս մաքրությամբ
	պրոպիլենգլիկոլ (%)	95-ից ոչ պակաս մաքրությամբ

».

6) հավելվածի 17-րդ կետից հանել «ծխախոտի» բառը.

7) հավելվածի 17-րդ կետի 1-ին ենթակետը «Ծխամորճի ծխախոտ» բառերից հետո լրացնել «, Տաքացվող ծխախոտի գլանակ», «Տաքացվող կապսուլա ծխախոտով» բառերով.

8) հավելվածի 17-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ ենթակետով՝

«10) Տաքացման համար նախատեսված սարքի անվանումը, որի հետ օգտագործվում է տաքացվող ծխախոտով արտադրատեսակը:».

9) հավելվածի 18-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) հիմնական նախազգուշացման տեքստերով՝

ա. «Ծխելը վնասակար է առողջությանը», կամ «Ծխախոտի օգտագործումը վնասակար է առողջությանը» (տաքացվող ծխախոտի համար),

բ. «Ծխելը կարող է լինել մահացու», կամ «Ծխախոտի օգտագործումը կարող է լինել մահացու» (տաքացվող ծխախոտի համար),

գ. «Ծխելը լրջորեն վնասում է Ձեզ և Ձեզ շրջապատող անձանց», կամ «Ծխախոտի օգտագործումը լրջորեն վնասում է Ձեզ և Ձեզ շրջապատող անձանց» (տաքացվող ծխախոտի համար).

2) լրացուցիչ նախազգուշացման տեքստերով՝

ա. «Ծխելն առաջացնում է թոքի քաղցկեղ», կամ «Ծխախոտի օգտագործումն առաջացնում է թոքի քաղցկեղ» (տաքացվող ծխախոտի համար),

բ. «Պահպանեք երեխաներին՝ թույլ մի տվեք նրանց շնչել ծխախոտի ծուխը»,

գ. «Ծխելը հղիության ընթացքում վնասում է Ձեր ապագա երեխային», կամ «Ծխախոտի օգտագործումը հղիության ընթացքում վնասում է Ձեր ապագա երեխային» (տաքացվող ծխախոտի համար),

դ. «Ծխելն առաջացնում է սիրտ-անոթային հիվանդություններ», կամ «Ծխախոտի օգտագործումն առաջացնում է սիրտ-անոթային հիվանդություն-ներ» (տաքացվող ծխախոտի համար),

ե. «Ծխելը հանգեցնում է անոթների խցանման և հանդիսանում է սրտի և ուղեղի կաթվածի պատճառ», կամ «Ծխախոտի օգտագործումը հանգեցնում է անոթների խցանման և հանդիսանում է սրտի և ուղեղի կաթվածի պատճառ» (տաքացվող ծխախոտի համար),

զ. «Ծխելը թողնելով՝ կարող եք նվազեցնել սրտի և թոքերի մահաբեր հի-վանդությունների հավանականությունը», կամ «Ծխախոտի օգտագործումը դա-դարեցնելով՝ կարող եք նվազեցնել սրտի և թոքերի մահաբեր հիվանդությունների հավանականությունը» (տաքացվող ծխախոտի համար),

է. «Ծխելը վնասում է սերմնահեղուկը և նվազեցնում վերարտադրողական-ությունը», կամ «Ծխախոտի օգտագործումը վնասում է սերմնահեղուկը և նվա-զեցնում վերարտադրողականությունը» (տաքացվող ծխախոտի համար),

ը. «Ծխելն առաջացնում է թոքի մահացու քաղցկեղ», կամ «Ծխախոտի օգտագործումն առաջացնում է թոքի մահացու քաղցկեղ» (տաքացվող ծխախոտի համար):».

10) հավելվածի 19-րդ կետը «Ծխելու» բառից հետո լրացնել «կամ ծխախոտի օգտագործման» բառերով.

11) հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետում «նախատեսված 8 տար-բերակներով» բառերը փոխարինել «նախատեսված տարբերակներով» բառերով.

12) հավելվածի 4-րդ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով.

«

12.	ԳՕՍՏ 6824-96 Գլիցերին թորած	Ընդհանուր

		տեխնիկական պայմաններ
13.	ԳOUS 8072-77 Ֆերմենտացված ծխախոտի հումք	Տեխնիկական պայմաններ
14.	ԳOUS 26996-86 Պոլիպրոպիլեն և պրոպիլենի համապոլիմերներ	Տեխնիկական պայմաններ

»:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշմամբ սահմանված ծխախոտային արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ստուգաթերթերի հաստատումը:

3. Սահմանել, որ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում ծխախոտային արտադրանքը շրջանառվում է սույն որոշման 1-ին կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Երևան

29.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ